ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1974 թ. դեկտեմբերի 12-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովը, որին ներկա էին քնկ. ընկ. Կ. Ս. Դեմիրճյանը, Ն. Խ. Հարությունյանը, Գ. Ա. Արզումանյանը, Ս. Ս. Թովմասյանը, Լ. Գ. Ղարիբջանյանը, Հ. Մ. Բաղդասարյանը, Լ. Ա. Ստեփանյանը և Ջ. Ս. Կիրակոսյանը:

Ներածական խոսքով ժողովը բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը: Նա նշեց, որ հասարակության զարգացման գործում գիտության դերի բարձրացումը առանձնապես կարևոր է տնտեսական առաջընթացի ուղիով վստահորեն քայլող Հայկական ՍՍՀ-ի համար:

Կանգ առնելով գիտության պլանավորման հարցերի վրա, Վ. Հ. Համբարձումյանը ասաց. որ անհրաժեշտ է բոլոր ուժերն ու միջոցները կենտրոնացնել գիտական այն ուղղությունների զարգացման վրա, որոնք հանրապետությունում բավականաչափ բազա ունեն կամ էական դեր են խաղում ժողովրդական տնտեսության զարգացման գործում: Նա ընդգծեց գիտական հետազոտությունների որակի բարձրացման անհրաժեշտությունը: «Լինում են դեպքեր,— ասաց Վ. Հ. Համբարձումյանը,— երբ մենք կոլեկտիվի կամ առանձին գիտնականների առջև խնդիր ենք դնում, դրա լուծման համար միջոցներ առանձնացնում, իսկ հետո մոռանում ենք վերահսկել թեմայի կատարման ընթացքը, չենք պահանջում արդյունքները»:

Վ. Հ. Համբարձումյանը կանգ առավ նաև գիտության նոր ուղղությունների զարգացման հարցի վրա: Վերջում նա նշեց, որ անհրաժեշտ է արժանավայել դիմավորել Հայաստանի՝ Ռուսաստանին միանալու 150-ամյակը: «Այս հարցում,— ընդգծեց նա,— մեծ անելիքներ ունեն հատկապես հասարակական գիտությունների ներկայացուցիչները»:

Ժողովում «Ռուսաստանի պատմական դերը հայ ժողովրդի կյանքում» զեկուցմամբ հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ս. Պ. Աղայանը: Նա նշեց, որ ռուս մեծ ժողովուրդը հսկայական դեր է խաղացել շատ ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի կյանքում: Դա առավել ակնհայտ է դառնում, երբ այսօր, մեր ժամանակի բարձունքից հետադարձ հայացք ենք ձգում մեր ժողովրդի անցյալի, նրա ամբողջ բազմադարյան պատմության վրա:

Համառոտակի կանգ առնելով հայ ժողովրդի պատմության օրհասական էջերի վրա, երբ նա շարունակ ենթարկվում էր օտար նվաճողների ասպատակություններին, զեկուցողը մանրամասնորեն քննեց հայ ժողովրդի ռուսական կողմնորոշման փուլերը: Այդ կողմնորոշումը, որն իր հիմքում ուներ տնտեսական, առևտրական և կուլտուրական վաղեմի կապեր, 1828 թ. հանգեցրեց Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալուն, հայ ժողովրդի ազատագրմանը օտար լծից: Այդ իրադարձությունը բացառիկ դեր խաղաց մեր ժողովրդի կյանքում, նրան թույլ տվեց դառնալու ռուս մեծ ժողովրդի մեծագործությունների և Վ. Ի. Լենինի գլխավորած հեղափոխական պայքարի մասնակիցը:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը,— շարունակեց զեկուցողը,— պայծառ ուղի բացեց ճնշվածների և ընչազուրկների համար: Սակայն դաշնակցական արկածախնդիրների անփառունակ կառավարումը 1918—1920 թթ. երկիրը հասցրեց լիակատար քայքայման և անկման: Ավելին, 1920 թ. օտարերկրյա արշավանքի հետևանքով հայ ժողովուրդը կանգնել էր լիակատար ֆիզիկական ընաջնջման սպառնալիքի առաջ: Այդ ծայրահեղ վտանգավոր իրադրության մեջ հայ ժողովրդին օգնության եկավ Սովետական Ռուսաստանը:

Այնուհետև զեկուցողը խոսեց Հայաստանում սովետական իշխանության հաստատման պատմության դրվագների մասին: Ս. Պ. Աղայանը հիշատակեց Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի խոսքերը իմպերիալիզմի լծից և դաշնակների կործանարար կառավարումից Հայաստանը փրկելու գործում ռուս մեծ ժողովրդի, Սովետական Ռուսաստանի կատարած մեծ դերի մասին: Զեկուցողը բերեց այդ ժամանակաշրջա-

նում ռուս մեծ ժողովրդի կողմից հայ ժողովրդին ցույց տրված տնտեսական օգնության բազմաթիվ օրինակներ։ Ընդգծվեց, որ Սովետական Ռուսաստանն այդ օգնությունը ցույց տվեց իր համար շատ ծանր պայմաններում։ «Այդ օգնությունը,— ասաց Ս. Պ. Աղայանը,— հնարավոր էր միայն ժողովուրդների բարեկամության ու նրանց փոխըմբռնման լենինյան վեհ գաղափարի իրականացման շնորհիվ»։

Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում Հայաստանը վերածնվեց, վերածվեց բազմաճյուղ տնտեսություն ու առաջավոր տեխնիկա, բարձր զարգացած գիտություն ու մշակույթ ունեցող հանրապետության։ Հենց սա է ռուս մեծ ժողովրդի, նրա հեղափոխական պրոլետարիատի, մեծ Լենինի հիմնադրած կոմունիստական կուսակցության պատմական դերը հայ ժողովրդի կյանքում։

ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովում տեղի ունեցան նաև ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նոր իսկական անդամների և թղթակից-անդամների ընտրություններ։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի իսկական անդամներ ընտրվեցին Է. Հ. Միրզաբեկյանը (Ռադիոֆիզիկա և էլեկտրոնիկա), Վ. Հ. Ղազարյանը (Բուսաբանություն և բույսերի ֆիզիոլոգիա), Բ. Ն. Առաքելյանը (Հնագիտություն), Գ. Բ. Ջահուկյանը (Լեզվաբանություն)։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամներ ընտրվեցին Ն. Հ. Առաքելյանը (Մաթեմատիկա), Ս. Գ. Մացոյանը (Քիմիա), Վ. Բ. Ֆանարջյանը (Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա), Հ. Գ. Բակլավաջյանը (Մարդու և կենդանիների ֆիզիոլոգիա), Է. Գ. Աֆրիկյանը (Միկրոբիոլոգիա), Գ. Խ. Սարգսյանը (Արևելագիտություն), Ռ. Վ. Զարյանը (Արվեստաբանություն), Է. Մ. Ջրբաշյանը (Գրականագիտություն)։

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի օտարերկրյա անդամ ընտրվեց Փ. Զ. Հրաշը (ԱՄՆ, Ռադիոֆիզիկա)։

Ներկայումս Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմում կա 42 իսկական անդամ, 48 թղթակից-անդամ և 3 օտարերկրյա անդամ։